Հետաքրքրութեամբ ու երբեմն այ գարմանքով կարդացի Երեւանի Հայ Հեզուարաններու Միութեան գործադիր քարտուղար ու նոյն քաղաքի Պրիսոլի անուն օտար լեզուներու պետական հիմնարկի հայագիտական ամպիոնի վարիչ Տրիկ Խլղաթեանի հայերէն լեզուի եւ Հայաստանի ներկայ դպրոցներու մասին Փարիզի «Կամք» օրաթերթին մէջ տպուած հարցազրույցը (Տես «Կամք»-ի 4 Մայիս 2000 թիւեր)։ Թերթին թղթակից կարինէ Մ. Ղաուզեանի տուած վերջին հարցումին պատասխանը կարդալ ետք ես ինծի ըսի, թէ տակաւին ոչինչ փոխուած է Հայաստանի մեր մտաւորականներուն մօտ։ Նոյն անհեռատես մտայնութիւնը կը շարունակեն ունենալ անոնք, ուղղագրութեան ու անոր կապուած այլ հարցերու նկատմամբ։

Փրոֆեսորը հարցազրույցին սկիզբը տեղեկութիւններ կու տար Հայաստանի դպրոցական (աշակերտութեան) ներկայ իրավիճակի մասին, որոնք հարցականով մը խանդավառիչ կրնան նկատուիլ, մանաւանդ վերջին տասնամեակին Հայրենիքին մէջ պատահած քաղաքական, ընկերային, մշակութային, կրթական ու կենցաղային իրադարձութիւններուն քիչ թէ շատ մօտէն հետեւող ընթերցողին համար։

Ու ակամայ կը տարուիս մտածել, թէ հայրենի մտաւորականներուն համար ժամանակն ար-

դէն չէ հասած, որ դադրին Սփիւռքի մէջ տակաւին մտածող գանգուածները «Երկրորդ քաղաքացի» նկատելի ու երբ լուրջ ու պատմագիտական հարցում մասին կը խոսին, ըլլան աւելի արհեստավարժ, նոյնիսկ եթէ ոչ-արհեստավարժ մարդոց հետ է իրենց գործը։ Ու կը շարունակեն մտածել՝ տասը տարի ապառ ու անկախ ըլլալ ետք փոխուած ոչինչ կը նկատեն հինէն ժառանգ մնացած արտաքին այս քաղաքականութեան մէջ։ Այս ուղղութեամբ, հին, խորհրդային վարչակարգին մնացած ցաւալի ու խղճալի օրինակներ շատ ունինք, մեզի՛ մեր կեդրոնները, մեր դպրոցները, մեր ակումբները պայցած են հին վարչակարգ»ին պատկանող մտաւորական - գրող - արուեստագէտներէն։ (Բայց այս մէկը տարբեր պատմութիւն մըն է՝ տարբեր առիթներով պատմելի)։

Մեր լեզուին երկու գլխաւոր ճիւղերուն (արեւելահայերէն ու արեւմտահայերէն) ունեցած փոխյարարբերութեանց ու մանաւանդ արեւելահայերէնի դասական ուղղագրութեան վերադառնալու կապակցութեամբ եղած հարցումին, յարգելի փրոֆեսորը Պրիսոլի «պատմականօրէն» (ինչպէս ինք կ'ըսէ) կը մտնեայ հարցին (ներկայիս Հայաստանի մէջ գործածուած հայերէնի ուղղութեամբ) ու երբ ուղղագրութեան մասին կը խօսի, ան կը դիտարկէ գրագրական, նահանգական ու հեռու... պատմական ըլլալն։

Ներկայիս «Հայաստանի խօսակցական լեզուն վատթարացած է», կ'ըսէ «Կամք»-ի խօսակցի փրոֆեսորը ու ամբողջ յանցանքը կը նետէ «տարբեր հանրապետութիւններէն Հայաստան եկած գաղթականներուն» վրայ, որոնք «գէշ հայերէն կը խօսին եւ կ'ըսեն իրենց բարբառները կը գործածեն»։ Երկրորդ՝ կը գանգատի թէ «Հայ մտաւորականութեան մեծ հատուածը (հոս հարցական քանի մը նշան, Մ.Շ.) որ հիմնականին մէջ գրական լեզուն կ'երտողներն էին, լքած են Հայաստանը»։ Երկրորդ՝ կը հաստատէ թէ «հեռատեսիլի եւ ձայնասփիւնի բազում կայաններու աշխատակիցները մասնագէտներ չեն եւ չեն փայլիր հայերէնի իմացութեամբ։ Նոյնը կարելի է ըսել պետական պաշտօններուն մեծ մասին համար այլ, որոնք գէշ օրինակ կը ծառայեն ժողովուրդին»։ չորրորդ եւ վերջին հաստատումը լեզուի մասին։ «առաջ կը պայքարէինք ուսումնական մէջ, այսօր մաքուր ուստերէնի (աւաղ, Մ.Շ.) փոխարինած է աղաւաղուած անգլերէնը... Ուստի օտարանդութեան դէմ պայքարը կը շարունակուի, փոխուած է միայն ուղղութիւնը»։ Այս բոլորը կարդալ ետք մարգարէն մը եւս կը տարուիս մտածել թէ մեր «մեծասքանչ» լեզուն, փողով, թրմրուկով, դափ ու ծնծղայով նահանջի մէջ է Հայաստան աշխարհին մէջ։ Մենք ղո՞ւսուած լեզուներն ունինք հոս սոստեղծներուն հաւատարմ։ Ոչ թէ չենք ուզեր հաւատարմ, այլ

չենք հաւատարմ։ Վերջ. Անկախած թէ. խօսակցական լեզուն (յաճօխ նաեւ գրականը) կ'ազդուին իրենց շրջապատին, օտար լեզուներէն, որոնք ենթակալ են ու միշտ։ Այս մէկը ընկալած երեւոյթ մըն է, անխուսափելի երեւոյթ մը, այնքան ատեն որ հեռու կ'ապրինք մեր Հայրենիքէն, մեր հողերէն։ Բայց Հայրենիքին մէջ, մանաւանդ Երեւանին, ներքին չէ աղաւաղուած, օտարաբար հայերէն մը խօսիլ ու գրել, որուն դրոյ պատճառներուն ոչ համոզիչ բացատրութիւն կու տայ հայրենի փրոֆեսորը։

Մէկ ազգ, մէկ լեզու» կարգախօսը կը խօսի նաեւ մեր ստորուն. մանաւանդ մէկ ազգ ըլլալու գաղափարը։ Իսկ «մէկ լեզուն» չփոթ կը յանաճայնէ փրոֆեսորին ու մեր ուղեներուն մէջ։ Ինք կ'ըսէ, թէ «այդ չի նշանակեր արեւելահայերէն կամ արեւմտահայերէն»։ Հապա ի՞նչ կը նշանակէ յարգելի փրոֆեսորը։ Իսկ եթէ երկու կը նշանակէ, ուրեմն մէկ լեզու ունենալու կարգախօսը ի սկզբանէ սխալ է։

Ճիշդ է որ մենք միշտ մէկ լեզու ունեցած ենք, հայերէնը, այլապէս եթէ բոլոր գաւառաբարբառները նկատուի անենք, մէկ է աւելի լեզուներ կ'ունենանք։ Մեր լեզուն մէկ է, որ երկու գլխաւոր ճիւղ ունի՝ արեւելահայերէն ու արեւմտահայերէն, որոնք միայն հայրենիքում ու խոսարհումներով կը տարբերին իրարմէ, այսինքն քերականութեամբ։ Երկուքն ծնունդ տուող դայեակը սակայն մէկ է՝ գրարարը։ Այս երկու ճիւղերը իրարու չեն հակադրուիլ։ Չեն կրնար հակադրուիլ. այդպէս մտածում չկայ մեր մէջ։ Ինչպէս արեւմտահայութեան, նոյնպէս արեւմտահայերէնի գլխուն եկած փորձաքն Մեծ Եղեռնէն կը, 1915 թուականը, որ ջլտուեց, կասեցրեց իր գրագրացման ու բարդաւեճման ընթացքը։ Իսկ արեւելահայերէնի գլխուն եկած փորձաքն, արեւելահայութեան գլխուն եկած փորձաքն նման, 1920 թուականէն կը, խորհրդային Համակարգը։ «Նոր» կոչուած ուղղագրութիւնը ամբողջութեամբ ծնունդ է «համայնավարական» վարչակարգին, որքան այլ ջանքք քողարկել գայն, մեղմացուցիչ յայտարարութիւններով, ինչպէս կը ջնարար ընել փրոֆեսորը հարցազրույցի ընթացքին, «... նոր ուղղագրութիւնը ոչ թէ համայնավարական արտայայտութիւն է, այլ 19րդ դարուէն իսկ արդէն գոյութիւն ունեցած է իբրեւ կարեւոր նպատակ, գրութիւնն ու արեւելահայ (ընդգծումը) Ֆ. Խ.ի» արտասանութիւնը մտնեցնելու համար»։

Ո՞ր «19րդ դարուն», եւ ի՞նչ «գրութիւն եւ արեւելահայ արտասանութիւն մտնեցնելու» մասին է խօսքը եւ ինչ կապ ունին ատենք արեւելահայերէնի «նոր» ուղղագրութեան հետ։ «Համայնական» կարգանքը կարգերէն առաջ (1920), արեւելահայ գրողներ՝ Նալբանդեան, Պատկանեան, Բաճաճի, Թուրմանեան, Մուրաբեան, Շիրազեան, Ահարոնեան, Նար-Դոս, Իսահակեան, Տէրեան եւ շատ ուրիշներ (երկար է չարքը) արեւելահայերէնը կը գրէին դասական ուղղագրութեամբ, ճշգրիտ ու ճոխ հայերէն մը գործածելով։ 1920 թուականը

եկա ու քանոյց ամէն ինչ։ Այս կէտին՝ բառերը ծամծմելով ոչինչ կը շահինք։ Պարսկաստանն այ արեւելահայերէնով ու դասական ուղղագրութեամբ թերթ ու գրականութիւն կը հրատարակէ։ Մենք հարց չունինք իրենց հետ, ինչպէս հարց ուղղագրական, պիտի չուզէինք ունենալ նաեւ ներկայ Հայաստանի հետ։ Տարիներէ յ վեր մեր լեզուի եւ ժողովուրդի գլխուն վրայ զամոկյեան տերը նման կախուած մնացած է փրոֆ. Մանուկ Արեղեանի հարած ուղղագրութիւնը, ու այլատեսակ գիտարարութիւններու պատճառ հանդիսացած՝ մեր վարժարաններու աշակերտութեան։ Չենք համարձակուել Երեւան տպուած գիրք մը, որքան այլ արժէքաւոր, մտցնել դասարաններէն ներս, գէթ ինծի ծանօթ դպրոցներէն ներս։ Հոս սոսքը ուղղագրութեան եւ միայն ուղղագրութեան մասին է եւ կապ չունի բովանդակութեան հետ, որ խորհրդային տարիներուն, ան իսկ խոտորու ու արգելք կը հանդիսանար դպրոցներէն ներս մեր տարած աշխատանքին։ Իսկ հիմա, որ վերջապէս ձեռքագտած ենք «Հին» վարչակարգի այդ օտարաբար «բովանդակութեան», չենք ուզեր օտարաբար յարեւելահայերէններէն, չենք ուզեր օտարաբար յարեւելահայերէններէն։ Վերջապէս, մօտիկ ապագային ո՞վ պիտի հոգայ Սփիւռքի մշակութային, գրական, ուսումնական, ուստեղական կարիքները, եթէ ոչ մեր ազատ ու անկախ Հայաստանը։ Այո՛, ճիշդ է, որ Սփիւռքը դեռ երկար պիտի գոյատեւէ որպէս համայնք, որպէս հաւաքականութիւն։ Մենք պիտի ուզէինք սակայն, որ ան Հայաստանին կապուած տոկար, միացած, եւ ոչ թէ առանձին, որ դժուար պիտի դառնայ, որքան տարիներ թաւալին. դժուար եւ ուժասպար։ Ի վերջոյ Հայաստանը մեր հայրենիքն է՝ կամ ոչ։ Հողին վրայ կը ծաղկի՞, կը բարգաւաճի՞ լեզուն, մշակույթը, գրականութիւնը կամ ոչ։ Արեւելահայերէնը անշուշտ թէ մեր պետական լեզուն է։ Արեւմտահայերէնը սորտորուն մէջ տեղ ունի ան։ Ուզենք կամ չուզենք անժխտելի իրականութիւն մըն է այս մէկը, ո՞րքան այլ տարօրինակ թուի շատերուն։ Ինչ լաւ պիտի ըլլար, եթէ հարջք մը համագոր այդ օրը շուտով գար եւ մենք հպարտութեամբ մեր աշակերտներուն, մեր գաւառներուն ձեռք տեսնէինք դասական ուղղագրութեամբ ու Հայաստանի մէջ տպուած այդ գրքերը՝ առանց իրենց դէմքի ծամածռութեան ականատեսը առանալու, ինչ որ կը պատահի տարիներէ ի վեր ու նաեւ ներկայիս։

Փրոֆեսորը հարցազրույցը կը վերջացնէ անհեթեթ ու անընդունելի, գայրացուցիչ ըլլալու աստիճան արտայայտութեամբ մը։ Ուղղագրութեան ուղղուած հարցումին կը պատասխանէ ան.

«... իրենց գոյութիւնը դժուարութեամբ պահանջ մարդոց ուղղագրութիւնը փոխելու մասին խօսիլը անուսուզան մահացու վիրաւորանք է։

ՄԱՅՐԵՐՈՒ ՕՐՈՒՄՆ ԱՌԻԹՈՎ
ՀԱՅ ՄՈՐ ԼԱԻՍԳՈՅՆ ՆՈՒԷՐԸ՝
ՀԱՅ ԳԻՐՔԸ
50%
ԶԵՂՉ ԿԱՃԱՌՔ
ՄԵԾԻ ՏԱՆ ԿԻԼԿԻՈՅ
ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻ ԳՐԱՏԱՆ
ԲՈՂՈՐ
ԸՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ
16 ՄԱՅԻՄԷՆ 31 ՄԱՅԻՍ
ԳՐԱՏՈՒՆԵՆ ՆԵՐՍ
ՄԱՄՐՕՏԵՆ ԺՄՄԸ 8:00ԷՆ
ԿԵՍՈՐԸ ԵՏԲ ԺՄՄԸ 2:00,
ՆԵՐԱՌԵԱՆ ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐԸ

ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԳԵՂԱՐՈՒԷՏԱԿԱՆ ՅԻՇԱՏԱԿՈՒՄՆԵՐ

«ԱՐՅՈՒՆՔՆԵՐՈՒ ՀԱՄԱՆՈՒԱԳ»

Հայկական Յեղասպանության 85ամեակին նուիրուած մաղթանաւագի մը «Արմֆոնի աֆ Թիրզ»ի առաջին կատարումը տեղի ունեցաւ 30 Ապրիլին: Ամերիկահայ յօրհոգ եւ երաժշտական քննադատ Ճէֆ Մանուկեանի այս գործը հնչեց Մատչէյնի փառատօնին բացումին առիթով: Դրուատօնած երկու յօրուածներ լոյս տեսան «Տը Սուք Լէյք Թրիպիւն»ի մէջ, որուն կ'աշխատակցի Մանուկեան: Ստորեւ՝ քարգմանուած բաժիններ փառատօնին նախորեակին հրատարակուած «Մատչէյնի փառատօնին մաղթանաւագը կը յիշատակ մոնցուալ ողբերգութիւն մը» յօրուածն, ինչպէս նաեւ՝ «Հարուստներդաշնակութիւններ կը հակադրուին «Արմֆոնի աֆ Թիրզ»ի սրուբեան» վերնագիրով քննադատական ակնարկն:

ԶԱԹՐՈՒՆ ՌԻԶ ՆԻԻԹԸՆ ԻՐ ՅՈՂՈՒՄԻՆ ՄԵՋ ԿԸ ԳՐԷ.

Ճէֆ Մանուկեան չ'ակնկալեք, որ «Արցունքներու համանուագ»ը ընկալուի իրրեւ այս եղանակի մանչն հաճելի գործը: Իրօք, ան ուրախ պիտի լոյլայ, եթէ ոչ ոք ծափահարուի իր մաղթանաւագին առաջին կատարումովն ետք, որ կ'ոգեկոչէ Հայկական Յեղասպանութեան 85ամեակը: «Արցունքներու համանուագ»ը ամբողջութեամբ Մանուկեանի յորինումներն են, բայց արժանաւորն էր իր յարմարութիւնը եւ Մարդկային նիւթերու փառատօնին բացման օրը: Ժոն Թոքսնայթը պիտի ղեկավարէ 40 հոգիէ բաղկացած Մատչէյնի փառատօնին նուագախումբը եւ Եուրօպի «Օրաբորիս Սուսլըբի» երգչախումբը:

Մանուկեան կը լաւատարէ, թէ 1915էն 1923ի միջեւ օսմանեան թուրքերը շուրջ 2 միլիոն հայեր սպանեած են, յաճախ մէկն էր վայրագ, ահարկու եւ անբեւեակայելի ձեւերով: Մանուկեանի մեծ հայրը՝ Գարեգին Մալխաս Մանուկեան խոյս տուած է, սակայն ականատես եղած է իր ընտանիքին սպանութեան:

«Արցունքներու համանուագ»ը կ'ակնարկէ այդ վայրագութիւններուն, եւ երբեմն բացայայտօրէն ուռած դիակներու շարքեր կը ծփան եփրատ գետէն վար, մահուան դատապարտուած գաղթականութիւն մը կը քայլ անապատներէն, հայերուն, կը պարտադրուէր պարեմ մինչեւ Ֆիդիքիական սպառում, անոնք քարոզիչի մէջ կը թախտակէն եւ կ'ողբակիցուէին:

«Նուրիոյ նուր չէր գլուխը. թէ կարող լիւրջ աչքան վատ էր»։ կ'ըսէ Մանուկեան, որ թէ եւ Յեղասպանութեան մասին ընդհանուր գաղափար մը ունեցած է, սակայն անոր հակառակ

տարողութեան անդրադարձած է միայն «Արցունքներու համանուագ»ին համար ուսումնասիրութիւններ կատարել ետք: Անոր մեծ հայրը չէր սիրեր արծարծել նիւթը:

Իրօք, մաղթանաւագին կատարումին առնչուող անձերուն մեծ մասը անտեղեակ էր սարսափներուն տարողութենէն, եթէ ոչ նոյնինքն իրողարձուցեալն:

Մաղթանաւագին կառոյցը որոշ չափով կը յիշեցնէ յատկանական աւանդական հոգեհանգրստեան պատարագը: Օրինակ, «1915» վերնագիրով շարժումը աղօտ կերպով կը համապատասխանէ «Տիլ Իրէ»ին եւ «Փրէլը»ը «Թէ Տեւում»ին կամ «Հոսիլաս»ին:

Նուագախմբային հզօր նախերգանքը մը ետք մեցցօ-քսոլթալիօ երգչուհի Տորիս Պրունաթթի կ'երգէ առանց բաւերու եղերբոյ մը, երգեցողութեան մէջն էր դժուար ոճերէն՝ տաղի ձեւով: Տղամարդ սոփրակու ուռն Շինրոգ կ'երգէ մաղթանաւագին կրկնուող բնատրուողներէն մէկը, որ կ'ըսէ. «Ուր է հօրս գերեզմանը (ուր է իր տղ կրէլլլ աֆ մալլ ֆատըր): Ապա մեցցօ երգչուհին կ'երգէ «Փառաբանութիւն»ը հայերէն աղօթք մը, որ կը խորհրդանշէ հայ ժողովուրդին կրօնական նուիրումը: Ասիկա կ'առաջնորդէ «Ողբ»ին (լըմէր)։ Երգչախումբն ու մեցցօ երգչուհին կը պատմեն տեղահանուած հայութեան տառապանքին մասին:

«Արցունքներու համանուագ»ին կորիզը «1915»ն է, որ ահարկու մանրամասնութիւններով կը նկարագրէ գեղասպանութիւնը: «Այս երաժշտութիւնը տգեղ է, բարձր կը հնչէ. դժուար է եւ կատաղի» կը բացատրէ Մանուկեան:

Ապա սուր հակասութեամբ մը կը հնչէ «Օրոր»ը (լալլալլալ)։ Գուրգուր մը մանչուկի մը եւ անոր սպանուած մօր միջեւ: Հայ մեռելներուն նուիրուած «եղերբ»ի (էլընի) մը երգչախմբային բաժինին կը յաջորդէ «Աղօթք» մը (փրէլլը), որ Աստուծոյ օրհնութիւնը կը հայցէ հայ ժողովուրդին եւ հանդիսատեսներուն համար՝ իր աւարտին հասցնելով 50 վայրկեան տեւողութեամբ գործը: «Այս վերջին աղօթքը հակադաստեսին կը պարզեւէ փրկութեան զգացում մը», կ'ըսէ Մանուկեան:

Երաժիշտը հայկական երաժշտութիւնը սերտած է «Արցունքներու համանուագ»ը ստեղծելու ընթացքին, սակայն ան որեւէ հայկական մեղեդի չէ օգտագործած, փոխարէնը՝ իր ազգային երաժշտութեան երանգները ներմուծած է կրչուութիւնը, ճանչնալով անոր ներքինը եւ գործիքը: «Նախերգանք»ն աւազ, որ համանուագին Դրափներէն մէկն է: Հնչեցին որոտածայն եղանակներ, ապա ողբոյն բնատրուող մը՝ անպիական փոփոխուողով: «Նախերգանք»ն ետք մեցցօ -

զգացած իմ՝ ազգային ժառանգութեան հետ»։ կ'ըսէ Մանուկեան:

«Արցունքներու համանուագ»ին կատարումը մեծ ուսում մ'ընէ է «Օրաբորիս Սուսլըբի»ին համար, որ 85 տարի է ի վեր կ'երգէ Հենտրիկ «Մեալա»ն:

«Համանուագը ցայտուն կերպով 20րդ դարու, նոյնիսկ կարելի է ըսել 21րդ դարու երաժշտութիւնէ... առաջին ունկնդրութիւնը բաւարար չէ ամբողջութեամբ ըմբռնելու համար գայլ: Սակայն անմիջապէս վերջին եւ երեք ամիս այս գործին հետ ալորել ետք կրնամ ըսել. թէ կարելի է գայլն յաճախ ունկնդրել եւ միշտ նորութիւն մը գտնել անոր մէջ», կ'ըսէ «Օրաբորիս Սուսլըբի»ի երաժշտական ղեկավարը՝ Մորիս Լի:

Իսկ խումբին գեղարուեստական ղեկավարը՝ Տորիս Պրունաթթի կը բացատրէ. «Մարդիկ կ'ուզեն, որ «Օրաբորիս Սուսլըբի»ն նոր ուղղութիւններ որդեգրէ: Այս գործը երաժշտի միջոց մըն է: Նաեւ պատիւ է գայլն նուագել իբրեւ լարագիթ եւ վերջիշում անունը, որոնք մահացան: Ամէն ձեւով պատիւ է անունը մասին խօսելը»:

«Արցունքներու համանուագ»ին համար ուսումնասիրութիւններ կատարելու ընթացքին Մանուկեան հանդիպած է հայկական բազմաթիւ ժողովուրդային եղանակներու եւ որոշած է գանձել օգտագործել այլ կտորի մը մէջ, հաւասարակշռութիւն մը ստեղծելու նպատակով: «Համանուագը շատ տխուր եւ սգալի է. ամէն հայ պարկէ հագուստով չի շրջագայիր», կ'ըսէ Մանուկեան: Ան Ս վայրկեան տեւողութեամբ ազգային հնչերանգներով յորինում մը վերածած է 25 վայրկեան տեւողութեամբ միջակ ջութակի յարմարանուակ մը (վիոլա քոնչերթօ), որուն առաջին կատարումը տեղի ունեցաւ Մատչէյնի փառատօնին բացման օրը:

ՔՆՆԱԳԱՏԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ ԵՐԱԺՇՏԱԳԷ ՈՒՊԸՐԹ ԶՈՒՄԱՆ ԿԸ ՆԿԱՐԱԳՐԷ

Հայկական Յեղասպանութեան նուիրուած համանուագը գրացական էր եւ նկարագրական: Անիկ կ'ընդգրկէր հայկական եկեղեցական երգերէ բաժիններ, ինչպէս նաեւ Պրանֆորտ Նեյստրիեի Մանուկեանի գրչիւն պատկանող բառեր: «Լոյսերը աղօտեցան եւ մո՛տ մը վառեցան «Նախերգանք»ն աւազ, որ համանուագին Դրափներէն մէկն է: Հնչեցին որոտածայն եղանակներ, ապա ողբոյն բնատրուող մը՝ անպիական փոփոխուողով: «Նախերգանք»ն ետք մեցցօ -

«ԱՐԵԱՆ ԳԻԾԵՐ»Ը ԲԱՐԱԿ ԿԸ ՀՈՍԻՆ

«ԱՐԵԱՆ ԳԻԾԵՐ. ԶՄԻՌՆԱՆ ՅԻՇԵՆՈՎ, 1922» ՏԱՐԱՆԱՍԱՐՔԱՅԻՆ ԱՐՈՒԷՏԻ ԳՈՐԾԸ ԱՅՍ ՕՐԵՐՈՒՆ ԿԸ ՅՈՒՅԱԴՐՈՒԻ ԱՐՈՒԷՏԻ ՖՈՒԼԸՐ ԹԱՆԳԱՐԱՆԻՆ ՄԵՋ: «ՊՈՍԹԸՆ ԸԵՐՈՒՆ» ԹԵՐԹԻՆ ԱՐՈՒԷՏԻ ԸՆՆԱԳԱՏԸ՝ ՄԵՐԻ ԶԵՐՄԱՆ ԿԸ ՄԱՏԱՆՁԷ ԹԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Էնի Սփիլլոս Սքոթ, ճոն Ռեքսին եւ Ճոն Մալլա ստեղծած են մէկ կէ աւելի գրայարաններու հարց տարածասարքային (ինտրոլէյշն արթ) գործ մը՝ «Արեան գիծեր. Ջմիւռնան յիշելով, 1922» վերնագրով, որ նոյնքան փառատեսչ է, որքան՝ բարոյագլխ պարտաւորիչ: Արուեստագիտներ իրրեւ նիւթ ընտրած են ցնցիչ, բաց քիչ ծանօթ պատմական ոլորտներէն մը, որ երկար ժամանակ ի վեր վերջիշումի արժանի է:

Արուեստի այս գործը կը կեդրոնանայ 1922ին Փոքր Ասիոյ արևմտեան ափունքին՝ այդ օրերուն իրրեւ Ջմիւռնա ճանչցուած շրջանին մէջ ապրուած 5 օրերու վրայ: Այժմ Իզմիր անուր կրող հնդարեան քաղաքի դարեր շարունակ կը գտնուէր թուրքերու իշխանութեան տակ, սակայն յոյներուն վերադարձուցաւ 1919ին, դաշնակից ուժերուն կողմէ: Փոխանակումը հարցեր յարուցեց 1922ին թուրքերը ձեռնարկեցին քաղաքին վերատիրանալու վայրագ յարձակումի մը, որուն սարսափները կը մըցին Քոստոյնյոյի կ'պէրուն հետ:

Վայրագութեանց տարողութիւնը փոխանցելու համար արուեստագիտները կառուցած են տարածասարքային գործ մը, որ կը ստեղծէ յատուտողական համակող միջնորոտ մը: Սակայն դժբախտաբար բացատրական ամփոփ գրութեան մը չհոյութեան պատճառով բացմաթիւ ակնդիրներ անկարող են հասկնալու գործին իմաստը: մանաւանդ անոնք, որոնք ծանօթ չեն պատահած դէպքերուն:

Ասիկա չի նշանակեր, թէ տեղեկութիւնները կցկտուր են: Ընդհակառակը. երկու հակառակ թղթապանակներ կը պարունակեն յուսանկարներ Օսմանեան կայսրութեան պատմութեան, հայ ժողովուրդի անցեալին եւ քրիստոնէութեան մասին, ինչպէս նաեւ՝ այդ ժամանակներու օրաթերթի կտորուած յօդուածներ: Սակայն այս բոլորը ոչ միայն տեղեկութիւններու տարաք մը կը պարզեն, այլ նաեւ գանձելի ընկալելը կը դժուարացնեն:

Հակառակն թղթապանակներուն կողքին կ'երեւին նոյնքան աղօտ կերպով իրարու առջնուող բացիկներ, քարտէս մը, երկու նամակներ եւ պատկերաստիւսներ բացատրողական թղթիկը,

որոնք կը սկսին լոյս սփռել արուեստագիտներուն նպատակին վրայ: Թղթիկը պարզապէս կ'ըսէ. «1922ի Սեպտեմբերին. 5 օրուան ընթացքին, Փոքր Ասիոյ արևմտեան ափունքին զբոսնող հնդարեան Ջմիւռնա քաղաքը հրկիզուեցաւ իբրեւ կոսմոսի արժանաւոր կողմէ, Մուսթաֆա Քեմալի հրամանաւ տարութեամբ: Մեծամասնութիւնը կ'ողմուր լոյն եւ հայ բնակչութիւնը բնաջնջուեցաւ այնպիսի արարքով մը, որ կերկայ ժամանակներուն կը բնորոշուի իբրեւ «ցեղային մաքրագործում»:

Այսուհանդերձ այս համառօտ ծանօթագրութիւնը կը ստեղծէ շատ աւելի մեծ հարցականներ, որոնք պատասխանները անգոյն են ցուցաբերուած գործին մէջ: Անկապ փաստերու եւ անձնական յիշողութիւններու տակ կ'ըսէ՝ անիկա գուրկ է ընդհանուր պատկերի մը տպաւորութիւնը արեւելու ուժեղութենէն: Օրինակ, ոչ մէկ յտակալ բացատրութեան միայն կը հանդիպինք թուրքերու կողմէ այլ ցեղերու դէմ ի գործ դրուած հայաձանքներուն եւ հայութիւնը արմատախիլ ընելու արտափելի քաղաքականութեան, որ կը միտէր ստեղծել «Թուրքիա մը» թուրքերուն համար», որուն գագաթնակետը Ջմիւռնիոյ աղէտն էր: Սակայն յիշողութեան մը իրրեւ մէկ բաժինը ներկայացուած այս տեղեկութիւնը գուրկ է առարկայական մօտեցումի կշիռն:

Գործարարարը շատ աւելի մուլէ է տարածասարքային գործին իմաստը: Սփիլլոս Սքոթ եւ Ռեքսին կառուցած են նաեւ մը յառաջամասը, որ կ'երկարի ոչպի պատկերաստիւսին խորքը: Պատկերաստիւսին գտնելն քիչ մը բարձր տեղարուած գործը ջուրի վրայ ծփացող տախտակամածի մը տպաւորութիւնը կ'աւելնէ: Անիկա շրջապատուած է շատ կոկիկ շարուած հագուստներով:

քոկիքալիօ երգչուհի Տորիս Պրունաթթի երգեց իր տրամաբար եւ երաժշտականօրէն խտասպահանջ բաժիններէն մէկը. երգչուհիին ճայնային խորութիւնը եւ գեղեցկօրէն արտաբերած մեղեդիայուն տողերը սուր կերպով հակադրուեցան նուագախումբին պահած կայուն եւ մեղմ «ալլ» ճայնաստիճանին:

Տղամարդ սոփրակու երգիչ Իւան Շինրոգ համանուագին գունային երանգը բնորոշեց երգելով հայածող նախադասութիւն մը. «Ուր է իր տղ կրէլլլ աֆ մալլ ֆատըր»: Շինրոգ իր ճայնային եւ ոճային անմեղութեամբ սուր կերպով կը հակադրուէր բաւերուն բովանդակած ողբերգականութեան:

Հեղանախան հակասութիւններ առկայ էին համանուագին ամբողջ տեւողութեան:

Հին հայկական ճայնաստիճաններ միախառնուած էին 20րդ դարու յատուկ հնչերանգներուն: Գեղեցիկ, հեցասահ եղանակներ եւ հարուստ ներդաշնակութիւններ կը հակադրուէին դիպուկ եւ երբեմն պատկերաւոր բաւերուն: Ստեղծուած խայթող յարուածութիւնը լուծում մը կը տեսնէր համանուագի տեւողութեան:

Ջգացականութեամբ յորդուն եւ երաժշտականօրէն լսեմ գագաթնակետ մը հասաւ համանուագը, երբ Պրունաթթի եւ Շինրոգ երգեցին ցնցիչ «Լալլալլալ»ը: Այս բաժինն վերջաւորութեան մանչուկը իր գլուխը կը դնէ նոր մահացած մօր վրայ եւ կ'երգէ ողբերգական տող մը. «Ուսալլ ուալլ ալլ լեֆթր յիլինալլ»:

Համանուագը աւարտեցաւ սկիզբը հնչած բնատրուողի կրկնութեամբ եւ նուագախումբային «Սլլ» ճայնաստիճանին մեղմութեամբ յանդեցաւ լուծում մէջ: Լոյսերը աղօտեցան՝ սրահին մէջ ձգելով միայնակ վառող մոմի մը չարտասանած բառերը:

Ժոն Թոքսնայթը համանուագը մեկնարանեց հեղինակաւոր շեշտով եւ գայն ղեկավարեց տեսիլքով ու հակակշռելու կարողութեամբ: Երգչախումբին կատարողութիւնը եւս լաւ էր. անոր երգեցողութիւնը կը կրտսէր եւ ճայնային տեսակէտն՝ գոհացուցիչ, թէ եւ արական ճայները չէին բաւարարելու պատշաճ հաւասարակշռութիւն մը պահպանելու պահանջը:

«ԱՆՈՒԱՆՈՒՄԸ»

Մայիսի սկիզբը Մասաչուսեցի համալսարանին պատկերասրահին մէջ ցուցադրուեցաւ Այլիմ Զլէվլոյի աւարտական գործը՝ Հայկական Յեղասպանութեան նուիրուած տարածասարքային (ինտրոլէյշն) արուեստի մը վիտէրիզի համարում մը՝ «Տը Նէյմիկ» վերնագրով: «Ընթրթըլ յմընթ Ուայր» թերթին մէջ լոյս տեսած գրութիւնը կը մանրամասնէ:

«Տը Նէյմիկ»ը վիտէրիզիի եւ տարածասարքային արուեստի խառնուրդ մըն է: Արուեստագիտութիւնը վիտէրիզիի մը պատրաստութեամբ կը փորձէ հասկնալ իր մեծ մօր անցեալին եւ իր ներկային միջեւ կապը: Եօրը պատահած արկած մը ետք ընտանիքին հակադրեցողութիւնը պատկերելով՝ Այլիմ Զլէվլոյ լուսարձակի տակ կ'աւան 1915էն 1923ի միջեւ պատահած Հայկական Յեղասպանութիւնը. գաղթը եւ վերապրողներու հասարակաց լուրջին ու սպառնալից մը:

Տարածասարքային գործը կը քննէ ցեղասպանութեան ազդեցութիւնը կրած այլ ընտանիքներու պատմութիւնը: Արուեստագիտութիւնը յաջողած է տեղեկութիւններ հաւաքել ինթըրնէթի եւ Ամերիկայի մէջ հայկական թերթի մը միջոցով: Ամերիկահայ ընտանիքներ տեղեկութիւններ, պատմութիւններ եւ նկարներ ուղարկած են: Սակայն արուեստագիտութիւնը հետ կապ հաստատած են նոյնիսկ հետադարձ Պոլսոյ Արուեստի ինտրոլէյշնը եւ Արմենիան: Սակայն իր տակ, թէ որքան տարածուած է հայկական վիտէրիզի:

Զլէվլոյ կը բացատրէ. «Սկիզբը ճշգրիտ տեղեկութիւններ խնդրեցի ցեղասպանութեան գոհներու եւ վերապրողներու մասին. սակայն միայն պատմութիւններ ստացայ: Յայտնապէս մարդիկ կը ցանկային իրենց ընտանիքի անդամներուն պատահածը լսելի դարձնել: Հետեւաբար կարգ մը նկարներու մէջ կը տեսնեմ պատմութեան եւ գոտ տեղեկութեան միաձուլում մը: Այն իր ստացած տեղեկութիւնները, պատմութիւններն ու նկարները վերաբարտադրած է 15 տախտակներու վրայ. ստուերոտ գործեր, որոնք կ'ակնարկեն ծածուկ ցեղասպանութեան, ինչպէս կը բացատրէ արուեստագիտութիւնը:

«Այսօր գրեթէ ոչ ոք տեղեկ է Հայկական Յեղասպանութեան: Ուղեցի լուսարձակի տակ ստեղծել արդի ժամանակներու առաջին ցեղասպանութեան շարունակուող ազդեցողութիւնը: Ասիկա շատ սովորական հարց է. նկար ունենալու, որ ցեղասպանութիւններ տեղի կ'ունենան Իտալիայի եւ Պոստիոյ մէջ... ցանկը շարունակելի է: Նաեւ այս բոլորը կը տեսնեմ ստեղծելու դիտարկութեան միաձուլում մը: Այն կը բացատրէ արուեստագիտութիւնը, թէ պատմական այս ողբերգութիւնը իր ազդեցութիւնը ունեցած է նաեւ իր անձնական կեանքին վրայ», կ'ըսէ ան:

Պատրաստելը
Լ. ԿԻՒԼՈՅԵԱՆ - ՍՐԱԳԵԱՆ



ՊԱՍԵԹՊՈԼ ԱՍԻՈՅ ԱՄՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

ՏԻՏՂՈՍԱԿԻՐ ՍԱԺԷՍ

ՏԱՊԱԼԵՑ ՌԻԱԿՏԵՆ՝ 77-57

Պատերազմի Ասիոյ 4րդ ախտահանութիւնը երէկ սկսաւ Ղազարի մէջ: 9 խումբեր կը մասնակցին մրցաշարին. Ա. խմբակէն՝ Քարիսիէ Քուէր, Զոյլ Ահաւ Բրան, Ռաիդէ Սուրիա եւ Սաժէս: Բ. խմբակէն՝ Իրիկապ Ս. Արաքիա, Մանամ Գաիւն, Փերրոնա Մարիպա, Փերիասի Ինգրոնգիա եւ Ռայան Քարար: Այնտեղ է շինական եւ ճափոնական զօրատը խումբերուն բացակայութիւնը:

Տիրապետող Սաժէս երէկ մրցաշարը սկսաւ փայլուն յաղթանակով: Անիկա Բ. կիսախաղին բացառիկ խաղարկութեան շնորհիւ դարձաւ դաշտին գէրը եւ 77-57 արդիւնքով (կիսախաղ 30-28) փառալուծ Սուրիոյ Ռաիդէն: Լաւագոյն մարզիկը մրցումէն ետք քննարկեցաւ Սաժէսի անարդէր ճարտարապետութիւնը: Այսօր փեղի կ'ունենան երկու այլ մրցումներ՝ Մանամա - Փերիասի եւ Ռայան - Փերրոնա:

ԱՆԳԼՈՅ ՖՈՒԹԲՈԼԻ ԱՄՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

ԼԻՎԵՐՓՈՒԼ ԶԿՐՅԱԻ ՀԱՍՆԻԼ

«ՉԷՄՓԻԸՆԶ ԼԻԿ»Ի ՄՐՅԱՇԱՐՔԻՆ

Անգլիոյ ֆուտբոլի ախտահանութեան 33րդ եւ վերջին ճանգրուանի մրցումներուն, Ա. դասակարգ փոխադրուելու վտանգին տակ գտնուող Պրեմիեր Սիթի յարդեցաւ մնալ բարձրագոյն դասակարգ, իր դաշտին վրայ 1-0 արդիւնքով պարտութեան մատչելի ետք Լիվերպոլը, որ այս պարտութենէն ետք 1999-2000 եղանակաւ պարտեց չորրորդ դիւիզիոն վրայ: Հետեւաբար յառաջիկայ եղանակին անիկա պիտի չմասնակցի «ՉԷՄՓԻԸՆԶ ԼԻԿ»ին այլ՝ Եռեւէնֆ. Ա. իր փոխարինող մրցաշարին:

Մրցումին «որ» կոյր նշանակեց Տէյլիտ Ուէլթրոյ (12րդ):

Շեֆիլտ Ուենզսլէյ եւ Ուոլթհորտի հետ Ա. դասակարգ փոխադրուող երրորդ խումբը եղաւ Ուոլթհորտը, որ 2-0 արդիւնքով պարտութիւն մը կրեց Սաութհեմթոնին:

Ախտահան ճանդիսացած Մանչեսթր Եունայթըտ իր կատարած վերջին մրցումին 1-0 արդիւնքով պարտութեան մատնեց Ասթոն Վիլան, արձանագրելով եղանակի իր 28րդ յաղթանակը: Թեոսի Շերինկհէմ նշանակեց Մանչեսթրի կոյր (53րդ):

Արդ դիրքը գրաւող եւ փոխ ախտահան ճանդիսացած Արսենալ 4-2 արդիւնքով պարտուած հետեւեցաւ Նիւքասթլին՝ իր դաշտին: Կէրի Սիֆա (6րդ եւ 59րդ), Էլլոն Շիրր (23րդ) եւ Էնտի Կրիֆին (33րդ) նշանակեցին Նիւքասթլի կոյրեր, իսկ Նիվանքոս Քանու (7րդ) եւ Սթեֆան Մայց (53րդ)՝ Արսենալի կոյրեր:

Չեյնս 4-0 արդիւնքով պարտութեան մատնեց իր հիւրը՝ Տերպի Քաուենթին, իսկ Շեֆիլտ Ուենզսլէյ՝ Լայոնթր Սիթին, նոյն արդիւնքով:

Հակառակ Ուէլթ Զամի հետ 0-0 արդիւնքով հաւասարութիւն մը արձանագրելուն, Լիվ կը դառնայ երրորդ կազմը, որ Մանչեսթրի կ'արժանանայ հետ պիտի մասնակցի «ՉԷՄՓԻԸՆԶ ԼԻԿ»ի մրցաշարին:

Ստորեւ՝ 33րդ եւ վերջին ճանգրուանի մրցումներուն արդիւնքները:

Ասթոն Վիլա - Մանչեսթր Եունայթըտ	0-1
Պրեմիեր Սիթի - Լիվերպոլ	1-0
Չեյնս - Տերպի Քաուենթի	4-0
Էլլոնքըր - Միտլդըլ	0-2
Նիւքասթլ - Արսենալ	4-2
Շեֆիլտ Ուենզսլէյ - Լայոնթր Սիթի	4-0
Սաութհեմթոն - Ուոլթհորտ	2-0
Թորքեմսթր - Մանչեսթր Եունայթըտ	3-1
Ուոլթհորտ - Քաուենթի	1-0
Ուէլթ Զամ - Լիվ	0-0

Ստորեւ՝ վերջնական դասաւորումը:

1. Մանչեսթր Եունայթըտ	91 (97-45)
2. Արսենալ	73 (73-43)
3. Լիվ	69 (58-43)
4. Լիվերպոլ	67 (51-30)
5. Չեյնս	65 (53-34)
6. Ասթոն Վիլա	58 (46-35)
7. Սաութհեմթոն	58 (57-56)
8. Լայոնթր Սիթի	55 (55-55)
9. Ուէլթ Զամ	55 (52-53)
10. Թորքեմսթր	53 (57-49)
11. Նիւքասթլ	52 (63-54)
12. Միտլդըլ	50 (59-49)
13. Էլլոնքըր	44 (47-54)
14. Զոլդեսթրի	44 (45-62)
15. Սաութհեմթոն	38 (44-57)
16. Տերպի Քաուենթի	36 (38-68)
17. Պրեմիեր Սիթի	33 (46-74)
18. Ուոլթհորտ	31 (38-70)
19. Շեֆիլտ Ուենզսլէյ	24 (35-77)
20. Ուոլթհորտ	

ՔԱՂՉԻՈ

ԼԱՅԻՈ ՌՈՍԱ ԸՆԴԴԻՍԱՅԱԻ ԱԽՈՅԵԱՆ

Իտալիոյ ֆուտբոլի 1999-2000 եղանակի ախտահանութիւնը աւարտեցաւ երէկ՝ Լայոնթր Ռոսայի մէջ իրագործումով: 28 տարեան ընթացքին անիկա տիրացաւ իր առաջին տիտղոսին՝ վերջին ճանգրուանին սպորտային Եունայթըտի անակնկալ պարտութենէն: Եունայթըտը, որ երկու կէտի առաջնութիւնն ունէր, տեղի տուաւ մինչ այդ 13րդ դիրքը գրաւող Փերուճիայի դաշտին վրայ (1-0), մինչ Լայոնթր 3-0 տապալեց Ռեճինան եւ կէտով մը գերազանցելով Թորքեմսթրի կազմը՝ իր կոյրը ստացաւ: 100 տարեան իր պատմութեան մէջ Լայոնթր կը շահի իր երկրորդ տիտղոսը (առաջինը՝ 1974ին):

Երկուսն ալ գոյց մըրցումներուն մէջ այլ «ողբերգութիւն»ը եղաւ տեղատարափ անձրեւը, որ շատ հաւանաբար ազդեց նաեւ մանաւանդ Եունայթըտի ճակատումին վրայ այն իմաստով, որ մրցումը մտկէս ժամ ընդ միջուկեցաւ եւ երբ վերսկսաւ, Եունայթըտը իր կոյրը Նախքան ընդմիջումը՝ Եունայթըտը տիրապետած էր մրցակիցին վրայ: Սակայն ասիական պարզապէս պատճառաւորութիւն է անշուշտ եւ «կարեւոր արդիւնքն է»... Առ այդ, յառաջիկայ

եղանակին Լայոնթր, Եունայթըտը եւ Ա. Սէ. Միլան կը ներկայացնեն իտալիան «ՉԷՄՓԻԸՆԶ ԼԻԿ»ի մրցաշարին, Ա. Էս. Ռոմա, Փարմա եւ Ֆրոնտինան կը մասնակցին Եունայթըտի մրցաշարին:

Ստորեւ՝ վերջնական դասաւորումը:

	ՆՇ.	ՍՏ.	ՎԷՏ
1. Լայոնթր Ռոսա	64	33	72
2. Եունայթըտ	46	20	71
3. Ա. Սէ. Միլան	65	40	61
4. Ինթեր Միլան	58	36	58
5. Փարմա	52	37	58
6. Ա. Էս. Ռոմա	57	34	54
7. Ֆրոնտինա	48	38	51
8. Ուտինտէ	55	45	50
9. Վերուճ	40	45	43
10. Փերուճիա	36	52	42
11. Ռեճինա	31	42	40
12. Պոլոնիա	32	39	40
13. Լեչէ	33	49	40
14. Պարի	34	38	39
15. Թորինո	35	47	36
16. Վենցիա	30	60	26
17. Զալիարի	29	54	22
18. Փիաչենցա	19	45	21

ՍՊԵՆՆԻԱՅ ԳՈՐԾՊՈՒԹԻՒՆ ԱՄՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

ՏԵՓՈՐԹԻՈ ՔՈՐՈՒՆԱ ՀԱԻԱՍԱՐՈՒԹԵԱՆ

ՄԸ ԿԱՐԻՔԸ ՌԻՆԻ ՎԵՐՋԻՆ ՀԱՆԳՐՈՒԱՆԻՆ

Սպանիոյ ֆուտբոլի ախտահանութեան 37րդ եւ նախափերջին հանգրուանի մրցումներուն եւս շուտակցաւ 1999-2000 եղանակի ախտահանութեան ճակատագիրը: Որովհետեւ պարագուծի դիրքը գրաւող Տեփորթիո ՔորուՆա չկրցաւ յաղթական վերադառնալ Ռաիդէ Սանթաբարթի (15րդ) դաշտէն եւ 0-0 արդիւնքով հաւասարութիւն մը արձանագրեց անոր հետ: Այսպիսով, իր 94 տարեան պատմութեան ընթացքին, Տեփորթիո չկրցաւ շահիլ տիտղոսը: 38րդ եւ վերջին հանգրուանի մրցումներուն, երբ Տեփորթիո ՔորուՆա հաւասարութիւն մը արձանագրեց անոր հետ, Սանթաբարթի իր հաղթանակը ախտահան: Իր կարգին Պարսելուա չկրցաւ յաղթական վերադառնալ Ռեալ Մադրիտի դաշտէն (17րդ) եւ 0-0 թրիւնքով հաւասարութիւն մը արձանագրեց անոր հետ:

Այս մրցումներէ ետք կէտով եւս կը մնայ Տեփորթիոն: Պարսելուայի նման 63 կէտ ունեցաւ նաեւ Ռեալ Մադրիտ, 3-2 արդիւնքով պարտութեան մատնելէ ետք Մալիա (12րդ): Սանթաբարթի իր վերջին երկու կոյրերը նշանակեց 86րդ եւ 89րդ վայրկեաններուն: Ռեալ Մադրիտ 2-0 արդիւնքով յաղթական վերադառնալ Ռեալ Պարսելուայի դաշտէն (18րդ), շնորհիւ Ռաիդէ ՔորուՆա իր վերջին երկու կոյրերը նշանակեց 86րդ եւ 89րդ վայրկեաններուն: Ռեալ Մադրիտ 2-0 արդիւնքով յաղթական վերադառնալ Ռեալ Պարսելուայի դաշտէն (18րդ), շնորհիւ Ռաիդէ ՔորուՆա իր վերջին երկու կոյրերը նշանակեց 86րդ եւ 89րդ վայրկեաններուն: Ստորեւ՝ 37րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները:

Այսպէս՝ նունանսիա 2-2 Ռեալ Պարսելուայի 0-2 Ռեալ Մադրիտ 0-2 Մալիա 0-0 Վալենսիա 0-0 Էսպանիոլ 0-0 Արիթիո Պիլաո 0-0 Ռաիդէ Սանթաբարթի - Տեփորթիո ՔորուՆա 0-0 Ռայո Վալեքանո 1-2 Ռեալ Մադրիտ 1-2 Ռեալ Մադրիտ 0-0 Ռեալ Վալենսիա 2-1 Մալիա 3-2 Արիթիո Մադրիտ 1-1 Մալիա 1-1

ՎԱՍՏԱՌՈՒՄ	ՎԷՏ
1. Տեփորթիո ՔորուՆա	66
2. Պարսելուա	63
3. Ռեալ Մադրիտ	63
4. Ռեալ Մադրիտ	62
5. Վալենսիա	61

ՊՈՒՆՏԱՆԻԿԱ

ԼԵԻՐՔՈՒՉԸՆ - ՊԱՅԷՐՆ ՊԱՅՔԱՐԸ Կ ԱԻԱՐՏԻ

ՄԻԱՅՆ ՅԱՌԱՋԻԿԱՅ ՇԱՔԱԹԱՎԵՐՋԻՆ

Գերմանիոյ ֆուտբոլի ախտահանութեան (Պունտանոյի) 33րդ եւ նախափերջին ճանգրուանի մրցումներուն, Հակառակ անոր, որ պարագուծի դիրքը գրաւող Պայէրն Լեյպցիգը 4-1 արդիւնքով պարտութեան մատնեց Այնթրախթ Ֆրանքֆորթը (14րդ), չկրցաւ ճանդիսանալ ախտահան, որովհետեւ անոր անմիջական մրցակիցը՝ Պայէրն Միլնիտը եւս յաղթանակ մը արձանագրեց, 3-0 արդիւնքով պարտութեան մատնելով նախափերջին դիրքը «գրաւող» Արմինիա Պրիֆելտը: Այսպիսով, անոնց երկուսն էլ նաեւ երեք կէտի տարբերութիւնը մնացնողներ: 34րդ եւ վերջին ճանգրուանին, Լեյպցիգը եթէ հաւասարութիւն մը արձանագրէ Ունթրախթին կհետ, պիտի ճանդիսանայ 1999-2000 եղանակի ախտահան:

Պունտանոյ Տորթմունտ (13րդ) չկրցաւ պարտութեան մատնել իր հիւրը՝ Շալքէն (12րդ) եւ 1-1 արդիւնքով հաւասարութիւն մը արձանագրեց անոր հետ, հակառակ անոր, որ Շալքէն մրցումին մէջ մասնաւորապէս իր կոյրը Պարսելուայի դաշտէն նշանակեց Շալքէնի կոյրը: 28րդ վայրկեանին կարծիքարտ տուցաւ: Էպէ Սէնտ նշանակեց Շալքէնի կոյրը (57րդ), իսկ Այֆրէտ Նիւհուս Տորթմունտի հաւասարութեան կոյր (81րդ): Համապարփ 3-0 արդիւնքով պարտութեան մատնեց իր հիւրը՝ Ունթրախթին (10րդ), շնորհիւ Մարթին Կրոնթի (22րդ), Սոնդր Ուլստայի (51րդ) եւ Ռոյ Փրակկըրի (89րդ) նշանակած կոյրերուն: Ստորեւ՝ 33րդ եւ նախափերջին ճանգրուանի մրցումները:

Վերջին ճանգրուանի մրցումներուն արդիւնքները:

Համապարփ	3-0
Ուլմ - Վոլֆսպուլերկ	2-0
Ֆրայպուրկ	2-1
1860 Միլնիտ	2-1
Շեքա Պրիլին	2-1
Արմինիա Պրիֆելտ	1-0
Պարսելուա Տորթմունտ	0-3
Շալքէն	1-1
Վերտըր Պրեմիեր	4-0
Հակառակ Ռոսթր	1-4
Պայէրն Լեյպցիգ	4-1
Այնթրախթ Ֆրանքֆորթ	4-1

ՎԱՍՏԱՌՈՒՄ ՎԷՏ

1. Պայէրն Լեյպցիգ	73
2. Պայէրն Միլնիտ	70
3. Համապարփ	58
4. 1860 Միլնիտ	52
5. Շեքա Պրիլին	50
6. Ֆրայպուլերկ	49
15. Հակառակ Ռոսթր	35
16. Ուլմ	35
17. Արմինիա Պրիֆելտ	29
18. Տուրկուրկ	21

ՅԻՄՆԱՅԻ ՖՈՒԹՊՈԼԻ ԱՄՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

ՓԱՐԻՉ ՍԷՆ ԺԵՐՍԷՆ ԱՊԱՅՈՎԵՅ

«ՉԷՄՓԻԸՆԶ ԼԻԿ»Ի ՏՈՍՍԸ

ՍԱՐՍԷՅ ՄԱԶԱՊՈՒՐԾ ՓՐԿՈՒԵՑԱԻ

Բ. ՊԱՍԱԿԱՐԳ ՓՈՒՍԱԴՐՈՒԵԼԷ

Ֆրանսայի ֆուտբոլի 1999-2000 եղանակի ախտահանութիւնը աւարտեցաւ Շարաթ օր: Տիտղոսակիրը՝ Մոնաքո արդէն շարաթներ առաջ բարձրացուցած էր րաժանը: Կր մնալ ամէնէն հետաքրքրականը՝ Բ. դասակարգ փոխադրուող թենիսիստներու հարցը, մանաւանդ որ անոնց մէջ էր Ֆրանսայի բոլոր ժամանակներու հրահան՝ Մարսէլը:

Փարիզ Սէն Ժերմէն ի վերջոյ յաւանակ մըր յորդեց երկար տարիներէ ի վեր: Անիկա գրաւեց դասաւորման երկրորդ դիրքը եւ յառաջիկայ եղանակին համար ապահովեց «ՉԷՄՓԻԸՆԶ ԼԻԿ»ի տուժար, 2-2 հաւասարութիւն մը արձանագրելով Թուլուզի մէջ: Թուլուզի կոյրերը նշանակեց Վլաստան Տիւրքի, իսկ մարտաբաղադի կազմին կոյրերը նշանակեցին Լորան Ռուպըր եւ Քրիսթիան:

Մարսէլ Մորանի մէջ 2-2 հաւասարութիւն մը արձանագրեց: Անիկա 90րդ վայրկեանին տուցաւ կոյ մը, որ կրնար «ժահագու» ըլլալ եւ պատճառ դառնալ անոր Բ. դասակարգ փոխադրութեան: Բարբախտաբար սակայն մնացեալ մրցումներուն արդիւնքներուն, ինչպէս նաեւ իր նպատակները կոյրելով, ինչ շնորհիւ անիկա մնաց Ա. դասակարգ, իր փոխարինողը մըր յորդեց ետք: Այս եղանակին Ունթրախթ Բ. դասակարգ կը փոխադրուի Մոնպելիէ, Լը Զաբը եւ Նանսի, որոնց տեղ Ա. դասակարգ կ'ընդունան Կէնկան, Թուլուզը (կամ Սոնա) եւ Լիլ: Եունայթըտը Ա. դասակարգ փոխադրուց, նաեւ եւ Կէնկան, իսկ «ՉԷՄՓԻԸՆԶ ԼԻԿ»ի ախտահան Մոնաքո եւ փոխ ախտահան Փ. Ս. Ժ.:

1999-2000 եղանակի կոյրերը կը հանդիսանայ արագիւղի Սոնի Անտերսոն (Լիլ) 23 կոյրով: Երկրորդ դիրքը կը գրաւէ Տալիս Թրեքեկէ (Մոնաքո) 22 կոյրով, իսկ երրորդ՝ իտալացի Մարքո Սիմոնէ (Մոնաքո)՝ 21 կոյրով: Ստորեւ՝ 1999-2000 եղանակի վերջնական դասաւորումը:

	ՆՇ.	ՍՏ.	ՎԷՏ
1. Մոնաքո	69	38	65
2. Փարիզ Սէն Ժերմէն	54	40	58
3. Լիլ	45	42	56
4. Պորտո	52	40	54
5. Լանս	42	41	49
6. Սքտան	44	43	48
7. Սէնթ Էթիէն	46	47	48
8. Սքսէն	37	38	47
9. Սքրապուրկ	42	52	46
10. Պարսիլ	43	39	45
11. Մէն	38	34	44
12. Նանսի	39	40	43
13. Ռեյն	43	48	43
14. Թուլուզ	36	52	43
15. Մարսէլ	44	46	42
16. Նանսի	43	45	42
17. Լը Զաբը	30	52	34
18. Մոնպելիէ	39	50	31

ՀԵՏԵԼԱՐՇԱԻ ԻՍԱԼԻՈՅ ԵՐԱՎԱԶԸ (ԺԻՐՕ) -

ՀՐՈՒՄԱՆ ՇԱՀԵՑԱԻ

ԲԱՅՄԱՆ ՄՐՅՈՒՄԸ ԻՍԿ

ՔԱՐԱՆԹԱ՝ Ա. ՀԱՆԳՐՈՒԱՆԸ

Հեթելարշաի Իսալիոյ 83րդ շրջավայրը սկսեցաւ Շարաթ օր: Բացման մրցումը՝ 4.6 քմ. երկարութեամբ ժամանակի դէմ մրցում մըն էր Հոնվի մէջ, որ աւարտեցաւ չեխ Էմա Վրոնալի անակունկով յաղթանակով: Երկրորդ հանդիսացաւ իտալացի Փաուլ Սալուտելլի, իսկ երրորդ՝ աւստրալիացի Պրետի Մաքլի:

Երէկ սկսաւ բուն շրջավայրը: Ա. հանգրուանը ունէր 129 քմ. երկարութիւն՝ Հոնվի Թերաչիւնա: Առաջին հանդիսացաւ իտալացի Իվան Քարանթա: Երկրորդ դիրքը գրաւեց Մարքո Զանտոթի, իսկ երրորդ՝ հոլանտացի Սթիւն Տը Եոնկ:

Ընդհանուր դասաւորման մէջ իտալացի Մարիո Չիֆոլինի կը գրաւէ պարագուծի դիրքը, հետեւաբար կը հազնի վարդազոյ շալկիլը: Այսօր տեղի կ'ունենայ Բ. հանգրուանը՝ 225 քմ. Թերաչիւնայի Մատալուր: Նշենք, որ Իսալիոյ շրջավայրը ընդամենը 21 հանգրուան է (բացի բացման մրցումէն), 3707 քմ. երկարութեամբ: Անիկա կ'աւարտի 4 Յունիսի, Թորինո - Միլան մրցումով (198 քմ.): Միայն մէկ օր հանգիստի օր է՝ 25 Մայիսին: Մնացեալ բոլոր օրերուն մրցումները կը շարունակուին հ

